

2013թ. ՀՀ Սյունիքի մարզի հողօգտագործողներին, համաձայն ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» N 971-Ն, ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հուլիսի 29-ի N 971-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 905-Ն որոշումների, 2013 թվականին հատկացվել է 770 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը բաշխվել է 62 համայնքների 850 շահառուներին և 200 տոննա աշնանացան ցորենի էլիտա սերմացու՝ Ռուսաստանի դաշնությունից ներկրված, որը բաշխվել է 21 համայնքների 73 շահառուների միջև: Տեղական արտադրության ՍԱՄ-ի միջոցով ևս տրվել է էլիտա սերմացու 8,1 տ, որը բաշխվել է 2 համայնքի 3 շահառուների /Եղվարդ, Ագարակ/:

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ֆերմերային տնտեսություններին և համայնքներին նախատեսվել և շուկայականից էժան գներով ձեռք է բերվել և հատկացվել 1507668 լիտր (907668 լիտր գարնան և 600000 լիտր աշնան) դիզվառեյիք, 2400տ ազոտական պարարտանյութ (2000տ. գարնան և 400տ. աշնան), մկնանման կրծողների դեմ պայքարի կազմակերպման նպատակով 11141կգ թունանյութ /ցինկի ֆոսֆիդ/, որի միջոցով 48 համայնքներում պայքար է կազմակերպվել 9034հա ցանքատարածությունների վրա: